



# ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳԻՉԸ

Կանաչ, երկարապեխ ճպուռը, ոտքը՝ ոտքին, ձողունի մը վրայ նստած, կ'երգեր:

- Ճը՛ռռ...ճը՛ռռ... աշխարհն իմս է՛, աշխարհն իմս է՛:

Ծաղիկները քնացած էին, անտառին մեջ ուրիշներ ալ, որ արդեն շատո՛նց քնացած էին բաւական նեղացան անոր միալար ձայնը լսելէն: Իսկ յետոյ, այդ ի՞նչ երգ է, արդեօ՞ք միայն ինքն է այգիին մեջ հանգստացողը: Այս ճպուռը անընդհատ կ'երգեր եւ գիշերո՛վ, չէ՞ որ բոլորը քնացած են:

- Լսէ՛, պիտի լռե՛ս, թէ ո՛չ...

- Ճը՛ռռ...ճը՛ռռ...

- Բոլորը քնացած են...,- կը բարկանային դեռ արթուն կամ արթնցած ծաղիկներն ու թռչունները:



- Ճը՛ռռ... այդ շնորհակալութեան փոխարէ՞ն է: Ես կ'երգեմ, որ դուք հանգիստ քնանաք:

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ: Դուն չես երգեր, այլ կը ճռռաս, այդ երկուքը իրարմէ տարբեր են:

- Այսպէ՛ս կ'երգեն՝ սը՛ւ...սը՛ւ..., - յանկարծ ձայնեցին ծառի մը տերեւները:

- Յի, հի, հի... սը՛ւ-սը՛ւ կ'ընէք ու կ'ընէք՝ թէ կ'երգեք,- ճպուռը ծաղրեց ծառին տերեւները:

Այդ պահուն մեղուն արթնցաւ, որ յոգնութենէն խո՛ր քունի մտած էր:

- Ո՛չ դուն երգել գիտես, ոչ ալ՝ դուն:

Տեսէ՛ք ինչպէս կ'երգեն,- ըսաւ մեղուն եւ սկսաւ բզզալ...

- Բը՛զզ... բը՛զզ...

- Ա...ա...հի, հի, հի... դուն կը բզզաս,- ծիծաղեցաւ ճպուռը,- այսպէ՛ս է երգելը:

Եւ բոլորը արթննալով եւ մէկը միւսին կարգ չտալով, իրարու կը բացատրէին, թէ ինչպէ՛ս պէտք էր երգել, որպէս զի միւսը քնանար: Բայց անոնցմէ ոչ մէկը այդ գիշեր քնացաւ:

Իսկ երգիչ ճպուռը, որ այդ ամբողջ աղմուկին հեղինակն էր, փախած ու խաղաղ անկիւն մը գտած, մշի՛կ-մշի՛կ կը քնանար:


ԹԻՒՄ ՊԱՏՐԱՍՏԵՅՈՒՆ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇԽԱՆՆԵՐ ԿԱԶՄԵՆԻ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՈՒՆ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆԵՐ

# ԻՆՉՊԷՍ ԱՐԵԻՆ ՉՏՆԵԼ ԱՄՊՈՏ ՕՐԵՐՈՒՆ


Եթե ձեզ կը հետաքրքրե, թե ո՞ր կը գտնուի արելը ամպոտ օրերուն, ապա դուրս եկէ՛ք եւ հետապնդեցէ՛ք արեւածաղիկը:

Արելոտ, ամպոտ կամ նոյնիսկ անձրեւոտ օրերուն, այս ծաղիկը իր երեսը արելուն կ'ուղղէ: Ծիշդ այս պատճառով ալ ան կոչուած է ԱՐԵՎԱԾԱՂԻԿ:

Այս ծաղիկները յաճախ կորսուած ճամբորդներուն օգնած են ճիշդ ճամբան գտնելու:



Միացո՛ւր իւրաքանչիւր ձուկ իրեն համապատասխան շուրջին:



Ինչպե՛ս կարելի է արեւածաղիկ մը գծել:

# ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՇԻՇԸ (ԻՐԼԱՆՏԱԿԱՆ ՅԵՔԻԱԹ)

Պատրին եւ իր կինը՝ Պրիծիթը, իրենց երեք զաւակներուն հետ կ'ապրէին պարտեզի մը կեդրոնը բարձրութեան մը վրայ շինուած գիւղական պզտիկ եւ ճերմակ տան մը մէջ:

Իրենց բնակութեան վայրը քանի մը տասնեակ մէթր էր, վարձուած՝ չար հողատիրոջմէ մը: Այս հողատերը ուներ քարէ սիրտ մը:

Սկիզբը ամէն ինչ լաւ էր Պատրինն համար: Բայց դժբախտութիւնը սկսաւ այն օրը, երբ կորսնցուց իր հաւերը, ընտանի կենդանիներն ու ցանքը:

Անօթութիւնը սկսաւ սպառնալ իր կնոջ եւ զաւակներուն: Պատառ մը հաց իսկ չունէին այլեւս: Իսկ ամէնէն սարսափելին այն էր, որ կը մօտենար տան վարձքը վճարելու ժամանակը:

Պրիծիթը կէս գիշերին արթնցաւ խեղճ ամուսնոյն հառաչանքէն: Քնատութիւնը զինք կը տառապեցնէր: Պրիծիթ տեսաւ, որ ան նստած անկողինին մէջ կը մտածէր այս դժուար կացութեան լուծում մը գտնելու մասին: Ան սկսաւ ամուսինը մխիթարել եւ նոր յոյսեր տալ անոր: Այս խօսակցութեան ընթացքին յանկարծ միտք մը յղացաւ եւ ըսաւ.

- Ինչո՞ւ մեր ունեցած կարմիր կովը չենք ծախեր. գէթ այս նեղութիւնը կ'անցընենք կարճ ժամանակի մը համար:

Ամուսինը հաւնեցաւ այս միտքը. հոգը այնպէս պաշարած էր զինք, որ նոյնիսկ մոռցած էր, որ տակաւին իր ընտանի կենդանիներէն կով մը մնացած էր:

Առաւօտեան շատ կանուխ Պատրին իր կովը առաջնորդեց դէպի գիւղի շուկան:

Ճամբան շատ երկար էր: Ան որոշեց տեղ մը հանգչիլ հագեցնելու իր եւ կովուն ծարաւը: Գիշերը հասած էր արդէն ու ամէն տեղ մութ էր, երբ Պատրի բարակ ձայն մը լսեց, որ զինք անունով կը կանչէր.

- Բարի լո՛յս, պարո՞ն Պատրի:

Պատրին վախով նայեցաւ ձայնի ուղղութեան եւ տեսաւ կարճահասակ մարդ մը, որ հագած էր կանաչ վերարկու մը, կարմիր կօշիկ մը եւ դրած՝ սրածայր գլխարկ մը: Պատրի միջոց չգտնելով փախչելու այդ տարօրինակ մարդու բարեւէն, պատասխանեց.

- Բարի լո՛յս...., բայց ինչպէ՞ս գիտցար անունս:

Մարդը պատասխանեց.

- Այսպիսի հարցում մի՛ հարցնէր ինձի.

Ես բոլոր գիւղացիներուն անունները գիտեմ: Ըսէ՛ ինձի, թէ ո՞ր կ'երթաս:

- Գիւղի շուկան կ'երթամ՝ այս կովը ծախելու համար:

- Լա՛ւ, բայց նախընտրելի է, որ կովը ինձի ծախես: Քեզի գին մը պիտի տամ, որմէ շատ գոհ պիտի մնաս:



- Որքա՞ն: Այն ատեն մարդը գրպանը խառնեց եւ մէջէն հանեց կանաչ շիշ մը, ապա ըսաւ.

- Այս կախարդական շիշը պիտի տամ քեզի կովուն փոխարէն:

Պատրին զարմացած նայեցաւ շիշին, ապա գլուխը շարժեց խնդալով եւ ըսաւ.

- Այս աստիճան զիս խե՞նթ կը կարծես, որ ընդունիմ շիշ մը իբրեւ ծախու գին իմ ունեցած ամէնէն սուղ կովուս համար:

Մարդը համոզիչ ոճով կրկնեց առաջարկը.

- Կ'առաջարկեմ, որ ընդունիս այս շիշը, որովհետեւ ասիկա քեզի բախտ ու երջանկութիւն պիտի բերէ:

Պատրին տատամսելով ըսաւ.

- Բայց ի՞նչ արժէք ունի այս շիշը, ահա զայն պարապ կը տեսնեմ: Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր, որ զիս խաբես:

- Նայէ, ան պարապ է, բայց ինչէ՛ր կ'ընէ:

- Կը բաւէ՛, կը բաւէ՛, կ'ընդունիմ առաջարկդ, բայց ըսէ՛ ինձի... ի՞նչ պիտի ընեմ այս շիշով, ձե՞թ պիտի լեցնեմ մէջը, թե՛ խմիչք: Կամ արդեօ՞ք զայն պիտի դնեմ սեղանին վրայ, իբրեւ տեսք:

- Կը բաւէ՛: Մտի՛կ ըրէ եւ բառ առ բառ գործադրէ՛ ըսածներս: Երբեք պիտի չզոջաս: Այս շիշը տուն տար, ըսէ՛ տիկնոջդ, որ մաքուր ծածկոցով սեղանի մը վրայ դնէ զայն, ապա այս բառերը արտասանէ՛.

- Ո՛վ շիշ, պարտականութիւնդ ըրէ՛:

Պատրին մարդուն խօսքերէն ազդուելով որոշեց, որ իր միակ կովը սիրով յանձնէ անոր եւ փոխարէնը ստանայ միայն կանաչ ու պարապ շիշ մը:

- Մնա՛ս բարով, պարո՞ն Պատրի, հիմա հարուստ մարդ մը դարձար:

Մարդը այս ըսելէն անմիջապէս ետք, կովուն հետ անհետացաւ:

Պատրին քայլեց դէպի տուն. անհամբեր էր տեսնելու, թէ ի՞նչ անակնկալներ պիտի բերէր իրեն այդ շիշը...

(Շարունակելի)

## ԻՆՉՈՐԻ ԳԵՏՆԱՈՒԻԺԸ ԿԸ ՓՈԽԷ ԻՐ ԳՈՅՆԸ



Գետնառիծը փոքր մողեզի տեսակ է, որուն մարմնին երկարությունը 30 ս.մ. է: Անոր զարմանալի յատկությունը մաշկին գոյնը փոխելու կարողությունն է: Գետնառիծին իսկական գոյնը մոխրագոյնի եւ

կանաչի խառնուրդ է, սակայն ան արտաքին գործոներու ազդեցութեան տակ իր գոյնը կը փոխէ ու կը դառնայ դեղինի եւ կանաչի խառնուրդ, մոխրագոյնի եւ սրճագոյնի խառնուրդ, կամ մանիշակագոյն եւ նոյնիսկ սեւ:

Վախը, բարկությունն ու հանգստությունը կրնան ազդել գետնառիծի գոյնին փոփոխութեան: Երբ ան վախցած ըլլայ, մաշկը բաց գոյն կը ստանայ, իսկ երբ բարկացած ըլլայ անոր գոյնը կը մթննայ ու կը սեւնայ: